ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

N- 16

26.11.2014 թվական

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ և ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 –րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով ավագանին որոշեց.

Հաստատել գույքագրման հանձնաժողովի կատարած գույքագրման արդյունքները՝ համայնքի գ /պ , մշակույթի տան, գրադարանի գույքի հաշվառման գործում:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ / ստորագրություն ներ՝ կողմ, դեմ, ձեռնպահ,նշելով բոլորի ազգանունները, ներառյալ բացակաները /

1. Ա. Պետրովա-կողմ –
2.Պ. Թովմասով-կողմ –
3. Ի. Դինխոև-կողմ –
4. Ա. Բիթ Աբդալ –կողմ
5.Ս. Միխայլով-կողմ –
6.Ս. Թամրազով-կողմ –
7.Կ. Նիկոլյան -կողմ –

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

N-17

26.11.2014թվական

2015 Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ և ՀԱՍՏԱՏԵՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,10-րդ և 11-րդ հոդվածներով ավագանին որոշեց .

Հաստատել Վերին Դվին համայնում 2015թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1 . << օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների /ներառյալ և ոչ հիմնական / շինարարության տեղադրման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

ա / Մինչև 300 ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների ինչպես նաև ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ:

Բ / Սույն կետի ա ենթակետով չնախատեսված օբյեկտների համար :

Բ ա / 201-ից մինչև 500 ք.մ . ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15 000 դրամ:

Բ բ / 501 -ից մինչև 1000 ք.մ . ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25 000 դրամ:

Բ գ / 1001 -ից մինչև 3000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25 000 դ:

Բ դ / 3001 -ից և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50 000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

Գ / Մինչև 20ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 դրամ:

Դ / 25 և ավելի ք.մ. մակերես ունեցող օբյեկտների համար 2500 դրամ:

2 .Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման այլ արդիականացման աշխատանքները / բացառությամբ / ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվությամբ չպահանջվող դեպքերի համար եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով

ա / Չի նախատեսվում կցակառույցների , վերնակառույցների շենքի գաբարիտային թափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն 1500 դրամ:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1. Ոգելից խմիչք վաճառելու թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 դրամ :

2. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 դրամ :

5 . Համայնքի տարածքում՝

ա / Բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար մեկ ք.մ. 100 դրամ :

Բ / Հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և / կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 դրամ :

6 . Համայնքի տարածքում առևտրի օբյեկտներին ժամը 24:00 –ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 25 000 դրամ :

7 . Համայնքի առխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 4000 դրամ :

Վերին Դվին համայնքի վարչական տարածքում 2015 թ-ի համար սահմանել հետևյալ վճարները:

ա / Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերձնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փողհա - տուցման վճար սահմանել 400 դրամ:

բ / ՏԻՄ-ի կողմից մրցույթներ կազմակերպելու հետ կապված մասնակիցներից մուտքավճար ՝ 1000 դրամ:

Գ / Սահմանել աղբահանության վճար յուրաքանչյուր բնակչից ամսեկան 0 դրամ :

1. Ա. Պետրովա-կողմ
2.Պ. Թովմասով-կողմ
3. Ի. Դինխոև-կողմ
4. Ա. Բիթ Աբդալ –կողմ
5.Ս. Միխայլով-կողմ
6.Ս. Թամրազով-կողմ
7.Կ. Նիկոլան - կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

N- 18

26.11.2014թվական

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման Մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով ավագանին որոշեց.

04.05.01.58 գործառնական դասակարգման 5113 հոդվածից պակասեցնել 1000.0 դրամ և 975.0 հազար դրամ ուղղել 01.01.01.51 գործառնական դասակարգման 5113 հոդվածին գյուղապետարանի պատուհանների ճաղավանդակների նորոգման համար, իսկ 25.0 հազար դրամը ուղղել 5134 հոդվածին նախագծային աշխատանքների համար ;

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ / ստորագրություն ներ՝ կողմ, դեմ, ձեռնպահ,նշելով բոլորի ազգանունները, ներառյալ բացակաները /

1. Ա. Պետրովա-կողմ –
2.Պ. Թովմասով-կողմ –
3. Ի. Դինխոև-կողմ –
4. Ա. Բիթ Աբդալ –կողմ –
5.Ս. Միխայլով-կողմ –
6.Ս. Թամրազով-կողմ –
7.Կ. Նիկոլյան - կողմ –

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա